03.10.23 - 06.10.23
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դահլիճ

Մյունխենի համալսարանի պատմության ու արվեստի ֆակուլտետի Ռուսաստանի և Ասիայի պատմության ամբիոնի և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի համագործակցության շրջանակում կազմակերպվում է «Ենթակառուցվածքները Կովկասում 19-րդ դարի սկզբից մինչև ուշխորհրդային շրջանը» խորագրով միջազգային գիտաժողով, որը տեղի է ունենալու **ս.թ. հոկտեմբերի 3-6-ը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դահլիճում:**

Աշխատանքային լեզուն անգլերենն է (առանձին դեպքերում կդիտարկվեն նաև գերմաներեն և ռուսերեն զեկուցումներ)։

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչև մայիսի 1-ը arpine.maniero@collegium-carolinum.de և h.holzberger@lmu.de էլհասցեներին ուղարկել 500 բառի սահմաններում զեկուցման ամփոփագիրը և աշխատանքային կարգավիճակի մասին տվյալները (նամակում CC նշել ԵՊՀ պատմության ֆակուլտետի էլհասցեն՝ history@ysu.am)։

Զեկուցումների թեմատիկան ընդգրկում է հետևյալ ոլորտները.

1. «Ենթակառուցվածքներ և միգրացիա»,

2. «Տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցումը և շահագործումը»,

3.«Ենթակառուցվածքները՝ սոցիալ-մշակութային և մարդաբանական տեսանկյունից»,

4. «Ենթակառուցվածքները՝ անդրկայսերական/անդրազգային համատեքստում»,

5. «Ճովը և ցամաքը կապող ենթակառուցվածքները»,

6. «Ենթակառուցվածքները և շրջակա միջավայրը»:

Գիտաժողովից հետո նախատեսվում է զեկուցումների տպագրություն։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000

info@ysu.am